ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N - 1

N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Անի համայնք

ք.Մարալիկ «25» դեկտեմբերի 2018թ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Գնորցյանի, որը գործում է **ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ույուտ Սենթր>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերութան տնօրեն Լ. Հարությունյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 06.09.2018թ. կնքված N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրում կատարել հետևյալ լրացումները.

ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով պայմանագրում, ինչպես նաև պայմանագրին կից հավելված թիվ 1-ում (ծավալաթերթ նախահաշիվ), հավելված թիվ 2-ում (օրացուցային գրաֆիկ) և հավելված թիվ 3-ում (վճարման ժամանակացույց) կատարել լրացում՝ պատվիրատուի ռեկվիզիտներում ավելացնել նաև 900492000485 (սուբվեն.՝ արտաքին լուսավորության ցանցի անցկացում) հաշվեհամարը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ 06.09.2018թ. կնքված N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 պայմանագրի կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ::

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| Անի համայնքապետարան, | <<Ույուտ Սենթր>> ՍՊԸ |
| ք. Մարալիկ, Մաղաթյան 1 | ք. Արթիկ, Աբովյան 22 |
| <<Կենտրոնական գանձապետարան>> | <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Գյումրու մ/ճ |
| ՀՎՀՀ 05546057 | h/h 205122032481001 |
| Հ/Հ 900492171088 | ՀՎՀՀ 06108036 |
| Հ/Հ 900492000485 | Տնօրեն՝ Լ. Հարությունյան |
| Համայնքապետ՝ Ա. Գնորցյան | |
| ---------------------------------- /ստորագրություն/ | ---------------------------------- /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |